

## Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

« ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի

14.04.2015 թ. N 10-Ա/Ք հրամանով ստեղծված աշխատանքային խմբի

1. ՌՕԴ-54/2,6 դիտակը ժամանակին առաջադիմական նախագիծ է եղել, նրա կառուցումն սկսվել է անցած դարի 70-ական թվականներին, 1985-87 թվականներին կատարվել են ռադիոաստղադիտակի անտենայի կարգավորման աշխատանքները: Այժմ այն լուրջ վերանորոգման կարիք ունի, ուստի ի վիճակի չէ գիտության ժամանակակից խնդիրներ լուծել: Հայաստանում ռադիոաստղագիտությամբ զբաղվող գիտական դպրոցի բացակայության պատճառով իրատեսական չէ նաև Հայաստանում այն գիտական կամ կիրառական խնդիրները ձևակերպելը, որոնք կարելի կլինեն լուծել ՌՕԴ-54/2,6-ի օգնությամբ:

2. ՌՕԴ-54/2,6-ի օգնությամբ ռադիոաստղագիտության, կապի ու կառավարման համակարգերի, անտենային տեսության և տեխնիկայի, այլ հարակից ոլորտների ժամանակակից գիտական խնդիրներ լուծելու հնարավորություններ ստեղծելու համար անհրաժեշտ է զգալի միջոցներ ներդնել, հիմնովին փոխել ռադիոդիտակի կառավարման համակարգերը, օգտագործելով այն փաստը, որ տվյալ ոլորտում գիտական սարքաշինությունը հսկայական առաջընթաց է կատարել վերջին տասնամյակների ընթացքում: Անհրաժեշտ է ռադիոդիտակի նյութական արժեքի մեծ մասը կազմող անտենան կարգաբերել, վերանորոգել ռադիոդիտակի մի շարք այլ համակարգեր: Սակայն ՌՕԴ-54/2,6-ը շահագործման վիճակի բերելու համար անհրաժեշտ հսկայական միջոցներ ներդնելը « պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության համար հատկացվող միջոցներով անհնար է:

3. « պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության համար հատկացվող միջոցներով իրատեսական և արդյունավետ չէ անգամ ներկայիս վիճակում ՌՕԴ-54/2,6 պահպանելու համար համապատասխան ֆինանսներ հատկացնելը:



4. Առաջարկվում է՝

▪ Դիտակի վերաշահագործման նախաձեռնողներին (Արևիկ Սարգսյան և այլոք) օտարերկրյա գործընկերների, միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ մեկտեղ փորձել մշակել ՌՕԴ-54/2.6 ռադիոդիտակի և նրա շուրջ եղած ենթակառուցվածքի բազայի հիման վրա գիտակրթական կենտրոնի ձևավորման և գիտական տուրիզմի զարգացմանն ուղղված համատեղ բիզնես-ծրագիր՝ այն միջազգային կամ այլ ներդրումային համագործակցության շրջանակներում իրականացնելու նպատակով:


▪ Չափագիտության ազգային կենտրոնի ղեկավարությանը՝ հաշվի առնելով ՌՕԴ-54/2.6-ի շուրջ (Արագածոտնի մարզի Աշտարակի շրջանի Օրգով գյուղ) ձևավորված ենթակառուցվածքի՝ կառույցի, հարակից շինությունների ու տարածքի պահպանման ծախսերը հոգալու խնդիրը, հանրապետության համապատասխան կառույցների, կազմակերպությունների, ինչպես նաև վերոհիշյալ նախաձեռնող խմբի հետ քննարկել գիտակրթական գործունեության և գիտաուսումնական տուրիզմի շրջանակներում տարածքը կիրառելու հեռանկարը և հնարավորությունները:

Սամվել Հարությունյան




«ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ (աշխատանքային խմբի ղեկավար),

Արսեն Հախումյան



«ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրեն,

Ալբերտ Ղուլյան





«ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի կիրառական ռադիոֆիզիկայի լաբորատորիայի վարիչ,


Վահան Սահակյան





Չափագիտության ազգային ինստիտուտի օրենսդրական չափագիտության գծով տնօրեն,

Նորայր Խաչատրյան  Չափագիտության ազգային ինստիտուտի գիտական չափագիտության ծառայության ղեկավար,

Նորայր Յուլյան  Չափագիտության ազգային ինստիտուտի էտալոնների պահպանման բաժնի վարիչ,

Վարդան Սահակյան  ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի տեղակալ

Ռուզան Ասատրյան  ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ,

Անուշ Հովհաննիսյան  ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական ծրագրերի իրականացման աջակցության բաժնի գլխավոր մասնագետ